

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒԼԻՍ 2017

Դ. Կիր. Ջկնի Հոգեգալստեան /ԹԻԻ 13

SUNDAY, July 2, 2017

Fourth Sunday After Pentecost – N0/13



TODAY'S BIBLE READINGS

Matthew 12:38-45 | Romans 7:25,8:1-11 |

Պատարագիչ՝

ԱՐՇ. Տ. ԵՂԻԱ ՔՉՆՅ. ՔԵՐԿԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովիվ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,

Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Miss Lori Antounian

Organist: Mr. Karen Manucharyan

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12:38-45

38 Այն ատեն դպիրներէն ու Փարիսեցիներէն ոմանք ըսին իրեն. «Վարդապե՛տ, նշա՛ն մը կ'ուզենք տեսնել քեզմէ»: **39** Իսկ ինք պատասխանեց անոնց. «Չար եւ շնացող սերունդը նշան կը խնդրէ: Ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: **40** Որովհետեւ ինչպէս Յովնան մնաց կէտ ձուկին փորին մէջ՝ երեք օր ու երեք գիշեր, այնպէս մարդու Որդին պիտի մնայ երկրի սիրտին մէջ՝ երեք օր եւ երեք գիշեր: **41** Նինուէի մարդիկը դատաստանին օրը պիտի կանգնին այս սերունդին դէմ ու պիտի դատապարտեն զայն, որովհետեւ զոջացին Յովնանի քարոզութեամբ. եւ ահա՛ Յովնանէ մեծ մէկը կայ հոս: **42** Չարաւի թագուհին դատաստանին օրը ոտքի պիտի ելլէ այս սերունդին դէմ ու զայն պիտի դատապարտէ, որովհետեւ ինք եկաւ երկրի ծայրերէն՝ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. եւ ահա՛ Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս»:

43 «Երբ անմաքուր ոգին դուրս կ'ելլէ մարդէ մը՝ կը շրջի անջուր տեղեր, հանգստութիւն կը փնտռէ, ու չի գտներ: **44** Այն ատեն կ'ըսէ. “Վերադառնամ իմ տունս՝ ուրկէ ելայ”: Կու գայ եւ կը գտնէ զայն՝ պարապ, աւլուած ու զարդարուած: **45** Այն ատեն կ'երթայ, եւ կ'առնէ իրեն հետ եօթը ուրիշ ոգիներ՝ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին. եւ այդ մարդուն վերջին վիճակը կ'ըլլայ առաջինէն աւելի գէշ: Ա՛յսպէս պիտի ըլլայ այս չար սերունդին ալ»:

Matthew 12:38-45

38 Then some of the Pharisees and teachers of the law said to him, “Teacher, we want to see a sign from you.”

39 He answered, “A wicked and adulterous generation asks for a sign! But none will be given it except the sign of the prophet Jonah. **40** For as Jonah was three days and three nights in the belly of a huge fish, so the Son of Man will be three days and three nights in the heart of the earth. **41** The men of Nineveh will stand up at the judgment with this generation and condemn it; for they repented at

the preaching of Jonah, and now something greater than Jonah is here. ⁴² The Queen of the South will rise at the judgment with this generation and condemn it; for she came from the ends of the earth to listen to Solomon’s wisdom, and now something greater than Solomon is here.

⁴³ “When an impure spirit comes out of a person, it goes through arid places seeking rest and does not find it. ⁴⁴ Then it says, ‘I will return to the house I left.’ When it arrives, it finds the house unoccupied, swept clean and put in order.

⁴⁵ Then it goes and takes with it seven other spirits more wicked than itself, and they go in and live there. And the final condition of that person is worse than the first. That is how it will be with this wicked generation.”

ՀՈՈՄԷԱՅԻՆԵՐԻՆ 7:25, 8: 1-11

25 Շնորհակալութիւն Աստուծոյ՝, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: Ուրեմն ես ինքս միտքով կը ծառայեմ Աստուծոյ Օրէնքին, իսկ մարմինով՝ մեղքի օրէնքին:

1 Ուրեմն հիմա դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմինին համաձայն չեն ընթանար. 2 քանի որ կեանքի Հոգիին Օրէնքը՝ Քրիստոս Յիսուսով ազատեց զիս մեղքի եւ մահուան օրէնքէն: 3 Արդարեւ ինչ որ Օրէնքը անկարող էր ընել, որովհետեւ մարմինը տկարացուցած էր զայն, Աստուած իրագործեց. իր Որդին դրկեց՝ մեղանչական մարմինի նմանութեամբ եւ մեղքին պատճառով, ու դատապարտեց մեղքը այդ մարմինին մէջ, 4 որպէսզի Օրէնքին արդարութիւնը գործադրուի մեր մէջ՝ որ չենք ընթանար մարմինին համաձայն, այլ՝ Հոգիին: 5 Արդարեւ մարմինին համաձայն ապրողները՝ կը մտածեն մարմինին բաները, իսկ Հոգիին համաձայն ապրողները՝ Հոգիին բաները. 6 նաեւ մարմնաւոր մտածումը մահ է, իսկ հոգեւոր մտածումը՝ կեանք ու խաղաղութիւն: 7 Արդարեւ մարմնաւոր մտածումը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, քանի Աստուծոյ Օրէնքին չի հպատակիր. մանաւանդ չի կրնար ալ, 8 որովհետեւ մարմինին համաձայն ապրողները չեն կրնար հաճեցնել Աստուած:

9 Բայց դուք չէք ապրիր մարմինին համաձայն, հապա՝ Հոգիին համաձայն, եթէ իսկապէս Աստուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, ինք անորը չէ: 10 Սակայն եթէ Քրիստոս ձեր մէջ է, մարմինը մեռած է մեղքին պատճառով, իսկ Հոգին կեանք կը պարգեւէ արդարութեան պատճառով: 11 Ու եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին բնակած է ձեր մէջ, ուրեմն ան՝ որ մեռելներէն յարուցանեց Քրիստոսը, կեանք պիտի տայ նաեւ ձեր մահկանացու մարմիններուն՝ իր Հոգիով, որ կը բնակի ձեր մէջ:

Romans 7:25,8:1-11

²⁵ Thanks be to God, who delivers me through Jesus Christ our Lord!

¹ Therefore, there is now no condemnation for those who are in Christ Jesus, ² because through Christ Jesus the law of the Spirit who gives life has set you ^[a] free from the law of sin and death. ³ For what the law was powerless to do because it was weakened by the flesh, ^[b] God did by sending his own Son in the likeness of sinful flesh to be a sin offering. ^[c] And so he condemned sin in the flesh, ⁴ in order that the righteous requirement of the law might be fully met in us, who do not live according to the flesh but according to the Spirit.

⁵ Those who live according to the flesh have their minds set on what the flesh desires; but those who live in accordance with the Spirit have their minds set on what the Spirit desires.

⁶ The mind governed by the flesh is death, but the mind governed by the Spirit is life and peace. ⁷ The mind governed by the flesh is hostile to God; it does not submit to God's law, nor can it do so. ⁸ Those who are in the realm of the flesh cannot please God.

⁹ You, however, are not in the realm of the flesh but are in the realm of the Spirit, if indeed the Spirit of God lives in you. And if anyone does not have the Spirit of Christ, they do not belong to Christ. ¹⁰ But if Christ is in you, then even though your body is subject to death because of sin, the Spirit gives life ^[d] because of righteousness. ¹¹ And if the Spirit of him who raised Jesus from the dead is living in you, he who raised Christ from the dead will also give life to your mortal bodies because of ^[e] his Spirit who lives in you. sin.



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉԻ ՆՇԽԱՐՆԵՐՈՒ ԳԻՏԸ

Ս. Գրիգոր Լուսաւորիչը կեանքի վերջաւորութեան կը հեռանայ Սեպուհ լեռը եւ կ'ապրի մարդոցմէ ծածուկ՝ Մանյա այրք կոչուած վայրը՝ յանձնուելով ճգնակեցութեան եւ անդադար աղօթքի: Երբ ան կը վախճանի, Աստուծոյ նախախնամութեամբ ճգնավայր են կ'այցելեն տեղի հովիւները եւ կը տեսնեն պատուական աճիւնը՝ հայրապետական հանդերձանքով ու գաւազանով, Ս. սեղանով եւ սկիհով յանդերձ: Հասկնալով, որ իրենց գտած ծերունին սուրբ անձնավորութիւն է, անոնք մեծ պատկառանքով կը խոնարհին եւ օրհնութիւն կը խնդրեն ննջեցեալէն, ապա կը ծածկեն քարայրին մուտքը քարերով, ինամքով կը ծեփեն բոլոր անցքերը եւ կը հեռանան՝ գոհութիւն յայտնելով արարչին:



Այսպէս շատ տարիներ աստուածային տնօրինութեամբ Ս. Հայրապետին աճիւնը կը մնայ անթեղուած ապահով եւ մարդոց համար անյայտ վայրի մէջ, որպէսզի այն, ինչպէս կը գրէ Ս. Մովսէս Խորենացին, նորահաւատ ժողովուրդի կողմէ անխոհեմ պաշտամունքի առարկայ չդառնայ: Իսկ երբ արդէն գրեթէ հաստատուած էր քրիստոնէական վարդապետիւնը, Գառնիկ անունով ճգնաւորի մը երագին մէջ կը յայտնուի ինքը Ս. Գրիգորը եւ նկարագրելով իր նշխարներուն վայրը՝ կը պատուիրէ, որ ճգնաւորը անոնք տանի Դարանաղեաց գաւառի Թորդան գիւղը եւ յանձնէ հողին: Ս. հայրապետի նշխարները մեծ պատուով կ'ամփոփուին Թորդանի եկեղեցւոյ մէջ՝ առիթ դառնալով բազմաթիւ հիվանդներու ու ցաւագարներու բժշկութեան:

Ս. Վարդանանցի ժամանակաշրջաններուն Լուսաւորիչի նշխարներուն գլխաւոր մասը փոխադրուած է Ս. Էջմիածին: Հայոց հայրապետներն աւանդաբար կարելոր հանդիսութիւններու ժամանակ Ս. Գրիգորի հրաշագործ նշխարներէն մասունք մը դուրս կը բերէին՝ անով ներկաներուն օրհնելու համար: Առ այսօր Ս. Հայրապետի աջ ձեռքի մասունքը կը պահուի Ս. Էջմիածնի գանձատան՝ մասունքի պահարան-աջին մէջ, որուն հետ ամէն անգամ կ'օրհնուի նոր միւռնը: Լուսաւորիչի նշխարներէն որոշ մասեր այսօր սրբութեամբ կը պահպանուին աշխարհի տարբեր երկիրներու մէջ:


Ս. Գրիգոր Լուսավորիչի նշխարներու գիւտը Ս. Հայրապետին նուիրուած երեք տօներէն մէկն է, որ կը կատարուի Հոգեգալստեան Չորրորդ Կիրակին նախորդող շաբաթ օրը, եւ որուն կը նախորդէ համանուն շաբաթապահք:

Discovery of the Relics of St. Gregory the Illuminator

The Commemoration Day of the discovery of the relics of St. Gregory the Illuminator is one of the three significant feast days dedicated to the memory of the Patron Saint of Armenia.

According to Holy Tradition, following Armenia's conversion to Christianity, in his final years, St. Gregory led an ascetic life in the cave of Mane on the Mountain named Sepuh where he died in 326 A.D. Shepherds, finding his body, buried him not recognizing the Armenian Pontiff. One of his students, Garnik from Basen sees a vision, where Gregory identifies the location of his relics. The relics were thereupon transferred to the village of Tordan, in the province of Daranagh, and buried there.

The relics of St. Gregory the Illuminator are one of our most revered within the Armenian Church, as well as all Christian Churches. Following their discovery, some were taken to various places for safekeeping, among them Vagharshapat (Etchmiadzin), Byzantium, and Italy. The Right Hand of the Saint, preserved in the Mother See of Holy Etchmiadzin, is one of the most important sanctities of the Armenian Church, and is used by the Catholicos of All Armenians during the blessing of the Holy Chrism (Muron). To commemorate the day, Divine Liturgy is celebrated in our Churches.



ՄԱՏԹԵՈՍ: 12: 38-45

<<Չար եւ շնացող սերունդը նշան կը խնդրէ>>

Դարերու ընթացքին, մտաւորական անհատը տեւապէս փնտռած է ճշմարտութիւնը եւ ջանացած է բացատրել զայն: Ծճմարտութիւն ըսելով կը հասկնանք ծածկուած բաներուն երեւան գալը, գաղտիքներուն յայտնութիւնը: Այլ խօսքով, ճշմարտութիւն է այն ` իմչ որ իրականութեան համապատասխան է:

Պիւթակորաս թիւերու մէջ որոնած է ճշմարտութեանց սկզբունքը. Ան կը հաւատար որ թիւերու մէջ քօղարկուած է իրականութիւնը: Պղատոնի համար ճշմարտութիւնը կը կայանար աշխարհի ըմբռնումի ճշգրիտ գաղափարին արտայայտութեան մէջ: Քանզէ ճշմարտութիւնը կը բացատրէր առարկայի մը մասին մեր ունեցած գաղափարին կամ ծանօթութեանց փորձառութեամբ: Իսկ, հին կտակարանեան իմաստունները ճմարտութիւն ըսելով կը հասկնային իմաստութիւն, ողջմտութիւն եւ բարձր մշակոյթ:

Քրիստոնէութիւնը ճշմարտութիւնը կը տեսնէ Քրիստոսի մարդեղութեան եղելութեան մէջ: Աշխարհի մէջ Աստուծոյ յայտնութեամբ, ճշմարտութիւնը ապրող իրականութիւն դարձաւ:

Ծճմարտութիւնը ոյժ մըն է որ մեզ կ'ազատագրէ մեր մեղքերէն ու մոլութիւններէն: Ան հիմնովին կը փոխէ մեր մտածելակերպը, կենցաղը եւ կեանքի հանդէպ մեր կեցուածքը: Ծճմարտութիւնը կ'ազնուականացնէ մեր Յոգին ու կը սրբացնէ մեզ: Մեր անձերուն փրկութիւնը կ'իրագործուի ճշմարտութեան շնորհիւ.<<Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդիկ փրկուին ու ճշմարտութիւնը ճանչնան>> կ'ըսէ Պօղոս (Ա. Տիմ. Բ 4):

Քրիստոսէ առաջ շատեր խօսած էին ճշմարտութեան մասին, սակայն անոնցմէ որեւէ մէկը չէր մարմնաւորած ճշմարտութիւնը: Աստուած իր միածին որդին աշխարհ դրկեց որ ճշմարտութիւնը ցոյց տայ մարդկութեան: Ծճմարտութիւնը Աւետարանի անգին մարգարիտն է որ գիտակից քրիստոնեան կ'ըղցայ ունենալ իր կեանքին ամբողջական ուժովը:

Միայն ճշմարտութիւնը գտնել բաւական չէ, պէտք է նաեւ պահպանել զայն: Սուրբեր իրենց վարդապետի օրինակով իրենց արեան գինով պաշտպանած էին ճշմարտութիւնը: Քրիստոս իբրեւ ճշմարտութեան ուսուցիչ ճանչցուած էր բոլորէն: Նոյնիսկ զայն հալածողներ կը խոստովանէին թէ Անիկա ճշմարիտ

վարդապետ մըն էր, Աստուծոյ ճամբան ճշմարտութեամբ կը սորվեցներ: Կիրակնօրեայ Աւետարանի բաժինի մէջ դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք կը մերժէն Քրիստոսը եւ նշան կ'ուզէն անկէ որ ճշմարտութիւնը յստակ ցոյց տայ իրենց: Քրիստոս անոնց կ'ըսէ, Յովնան Մարգարէն եւ իմաստուն Սողոմոնէն զատ ձեզ նշան չկայ որ հասկնաք ճշմարտութիւնը:

Ուստի, սիրելի հաւատացեալներ մենք պետք չունինք Աստուծմէ նշան սպասելու, այլ պիտի հաւատանք որ Աստուծոյ ճշմարտութիւնը բացայայտնուի մեզ եւ փոխէ մեր միտքերն ու կեանքերը: Թոյլ տանք որ ճշմարտութիւնը ներգործէ մեր կեանքերէն ներս: Ունենանք Բարի գործեր կատարելու իմաստութիւնն ու կարողութիւնը: Ամէն:

“However, when he, the Spirit of truth, has come, he will guide you into all truth; for he will not speak on his own authority, but whatever he hears he will speak; and he will tell you things to come.”

John 16:13



**And we know that
in all things God
works for the good
of those who love him
who have been called
according to
his purpose.**

- Romans 8:28



Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներ

Պայծառակերպութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Վարդապետ – Կիրակի, 23 Յուլիս 2017

Վերափոխումն Ս. Աստուածածնի –

Խաղողօրհնէք – Կիրակի, 13 Օգոստոս 2017

Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017

Սանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Transfiguration of our Lord -

Sunday, July 31st

Feast of the Assumption of the Holy Mother of God -

Sunday, August 13th, 2017

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 17th, 2017

Annual Bazaar – Saturday & Sunday-

October 28 & 29, 2017

Children's Christmas /CFFA –


Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary –

Sunday, December 10th, 2017

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 2 Յուլիս 2017

Տիկ. Մայրանոյշ Օզողլուհի,
Տ. եւ Տիկ. Արման Էօզեանի եւ գաւկիին,
Տ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Արմինէ Շիրինեանի,
Տ. եւ Տիկ. Տարօն եւ Լորա Շիրինեանի,
Տ. եւ Տիկ. Տէյվիտ եւ Քրիսթին Մադտեսեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց
սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ՍԱՐԳԻՍ ՕԶՕՂԼՈՒԻ

(SARKIS OZOGLU)

Յոգևոյն ի հանգիստ

ԵՒ

Իրենց մեծ ծնողաց

ՆԵՐՍԵՍ ՕԶՕՂԼՈՒԻ

(NERSES OZOGLU)

ՅՌԻՓՍԻՄԷ ՕԶՕՂԼՈՒԻ

(HRIPSIME OZOGLU)

ՄԱՐԱՆԷ ՕԶՕՂԼՈՒԻ

(MARANE OZOGLU)

Յոգիներուն ի հանգիստ

Ինչպէս նաեւ՝

ՕԶՕՂԼՈՒ, ԿԻԲԼԷՉԵԱՆ ԵՒ

ՓԱՌՈՒՆԱԿԵԱՆ

Գերդաստաններու համայն ննչեցելոց հոգիներուն ի հանգիստ
(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տիկ. Վարդուհի Քանարի,
Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Արմինե Քանարի,
Տ. եւ Տիկ. Արմենակ եւ Պայծառ Ուլուսեանի
եւ դուստրին՝ Նարալիի,
Տ. եւ Տիկ. Հայկ եւ Նատիա Քանարի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ
ամուսնոյն, հօր, մօր եւ մեծ մօր՝

ՅԱԿԱՔ ՔԱՆԱՐԻ

(TZAVAK KANAR)

ԵՒ

ՀՌԻՓՍԻՄԷ ԱՍԱՏՈՒՐԱԵԱՆԻ

(HRIPSIME ASADURYAN)

Հոգիներուն ի հանգիստ



Տ. եւ Տիկ. Վազգէն եւ Սօսի Սեդրակեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց
սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ԱՐԱՔՍԻ ՕՏԵԹ ՍԵՂՐԱԿԵԱՆԻ

(ARAXI ODET SETRAKIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով



ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

***Donations of June have been received with great
appreciation 2017***

Mr. Aram Mnasyan \$100, Mr. Manvel Markosyan \$50.

Fathers Day:

Mr. & Mrs. Pierre Mazlounian \$100, Mr. & Mrs. Hovsep Doramajian \$25.

IN LIEU OF FLOWERS, THE FOLLOWING
DONATIONS WERE RECEIVED FOR:

THE LATE ARA ELAGOZ

Mr. & Mrs. Krikor & Irma Merakyan \$75, Mrs. Karmen Ketli, Mr. & Mrs.
Alex Kunter & Family \$50.

HOKEHANKISD:

THE LATE APRAHAM KALANDJIAN

Mr. & Mrs. Gary & Tania Guiragossian & Family \$50.





SOL



ՎԱՐԴԱՎԱՌ / VARTAVAR
ՊԱՅՇԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵՈՒՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

FEAST OF TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST

ՈՒՆՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

DIVINE LITURGY

Կիրակի, 23 Յուլիս 2017, ժամը 10:30-ին / Sunday,
July 23, 2017 at 10:30 am

Պատարագիչ`- Celebrant

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՅՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Ս. Սեղանին պիտի սպասարկեն Բրշ.
Սարկաւազները: Պատարագի երգեցողութիւնը
պիտի կատարէ «Կոմիտաս» Դպրաց Դասը:**

Ղեկավար` Լորի Անթունեան

Choirmaster: Lori Antounian

Երգեհոնահար` Կարէն Մանուչարեան

Organist: Karen Manucharyan

**Յաւարտ Ս. Պատարագի «Մարի Մանուկեան»
սրահին մէջ տեղի պիտի ունենայ ճաշկերոյթ,**

Եկեղեցւոյ ծխական խորհուրդին կողմէ:

After the Divine Liturgy lunch, will be held in

“Marie Manoogian” hall by Parish Council.

Մուտքի Լուր՝ \$20 / Entrance Fee \$20



SOL



**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

**FEAST OF ASSUMPTION OF THE HOLY VIRGIN MARY
& GRAPE BLESSING**

ՈՒՆՏԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ

DIVINE LITURGY

Կիրակի, 13 Օգոստոս 2017, ժամը 10:30-ին / Sunday,
August 13, 2017 at 10:30 am

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովի

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Ա. Սեդանին պիտի սպասարկեն Բրշ. Սարկալազները:
Պատարագի երգեցողությունը պիտի կատարե**

«Կոմիտաս» Դպրաց Դասը:

Ղեկավար՝ Լորի Անթունյան / Choirmaster: Lori Antounian

**Երգեհոնահար՝ Կարեն Մանուչարյան / Organist: Karen
Manucharyan**

**Յաւարտ Ա. Պատարագի Ծխական Խորհուրդի
Նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ խորովածի
սպասարկութիւն եւ Տիկնանց Յանձնախումբի
կազմակերպութեամբ «Անուշեղէնի Վաճառք»
Եկեղեցւոյ շրջափակին մէջ:**

- **After the Divine Liturgy BBQ will be held in the church front garden, organized by Parish Council &**

- **Bake Sale by Ladies Auxiliary.**

Մուտքի Նուէր՝ \$20 / Entrance Fee \$20



ԴՊՐԱՅ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

**Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցւոյ**

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

**Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք**

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347

Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Հոգեւոր Հովիւ

Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

Տ. Եղիա Ա Քինյ. Քերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միբելի Հասարակական, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.